



տարբերության պատճառով, այդ սերը տխուր վախճան ունեցավ: Միրզաջան Մադաթովն ու Աշըղ-Փերին բաժանվեցին եւ այլեւս երբեք իրար չհանդիպեցին:

1837թ. փոխզնդապետ Միրզաջան Մադաթովը վախճանվեց՝ առանց գոյատևության միջոցների թողնելով կնոջն ու միակ դստերը: Աշըղ-Փերին, որն այդպես էլ երբեք չամուսնացավ, դառնորեն ողբաց հանգուցյալի մահը եւ, մի քանի ամիս անց, հետեւեց նրան: Չնայած այն բանին, որ Ալեքսանդր եւ Գրիգոր Օրբելիանիները, Գիորգի Էրիսթավին, Ղավիթ Ղորղանաշվիլին եւ ուրիշներ մոռացության չմատնեցին իրենց ընկերոջը, այնուամենայնիվ, չկարողացան փրկել նրա երեք լեզուներով գրած բանաստեղծությունները, որոնք գովերգում էին Վրաստանն ու Հայաստանը, սերն ու նվիրվածությունը կնոջն ու հայրենիքին, ինչպես նաեւ համամարդկային արժեքները՝ մարդասիրությունն ու բարեկամությունը:

Ըստ իս, ժամանակն է մոռացության ճիրաններից փրկել մեծ հայորդու առեղծվածը, եւ ըստ արժանվույն գնահատել նրա դերն ու նշանակությունը գրականության մեջ՝ հենվելով, իհարկե, վրաց ականավոր գրականագետ Իսկոբ Բալախաշվիլու 1966թ. հրատարակած «Գրիբոյեդովն ու Նինո Ճավճավաձեն» աշխատության վրա, որտեղ եւ մեծ սիրով ու ակնածանքով է ներկայացված Լեռնային Ղարաբաղում ծնված ու մեծացած, այնուհետեւ Թիֆլիսում բնակություն հաստատած փոխզնդապետ ու բանաստեղծ Միրզաջան Մադաթովի մասին:

00000000 0000000000

0000000000 00000000 000000000000 00000000